ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 01/17.1/18024-18
08.11.2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ,
ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արշակյան

Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում եմ, որ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Կատարող Գառնիկ Հովհաննիսյան
Հեռախոս 011 52 63 89

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ի պատասխան ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության՝ ս.թ. նոյեմբերի 8-ի թիվ 01/17.1/18021-18 գրության՝ կից տրամադրվում է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իտալիայի Հանրապետության Կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրությունում՝ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին, այդ թվում՝ Համաձայնագրերով եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման հանգեցնող դրույթների և տվյալ տարվա համար Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած «Պետական բյուջեի մասին» օրենքում չներառված պարտավորությունների մասին եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ Անի Սարգսյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ. (011) 800-319

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իտալիայի Հանրապետության Կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրությունում՝ Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին

Արձանագրությունում Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող կամ ծախսերի ավելացման հանգեցնող դրույթներ առկա չեն:

ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Կատ.՝ Անի Սարգսյան
Միջազգային համագործակցության վարչություն
Հեռ. (011) 800-319

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Արշակյան,

Հիմք ընդունելով «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի դրույթները՝ կից ներկայացնում ենք 2018թ. հուլիսի 31-ին ստորագրված ««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իտալիայի Հանրապետության Կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) բնօրինակի հաստատված պատճենը, դրա հաստատման կամ վավերացման արտաքին քաղաքական նպատակահարմարության մասին ՀՀ արտաքին գործերի նախարարության եզրակացությունը և ուժի մեջ մտնելու կարգի վերաբերյալ տեղեկանքը:

Հայտնում ենք, որ Արձանագրության հետագա ընթացքն անհրաժեշտ է ապահովել Օրենքի 11-րդ և 12-րդ հոդվածների դրույթներով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք նաև «Արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի, «Արձանագրությունը հաստատելու մասին» Հանրապետության նախագահի հրամանագրի, «Արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մասին» ՀՀ Կառավարության որոշման, «Արձանագրությունը հաստատելու մասին Հանրապետության նախագահի հրամանագրի նախագծի մասին» ՀՀ Կառավարության որոշման և «Հայաստանի Հանրապետության Կառավարության ներկայացուցիչ նշանակելու մասին» Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշման նախագծերի ձևանմուշները՝ ըստ կիրառելիության օգտագործելու նպատակով:

Առդիր՝ 1 փաթեթ:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 18.10.2018 10:28:29 GMT+4

Հարգանքով՝ Signed by: RUBINYAN RUBEN 1803900202

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 1999 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ» ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իտալիայի Հանրապետության Կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրությունը ստորագրվել է 2018թ. հուլիսի 31-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի կողմից:

Արձանագրությունն ուժի մեջ է մտնում ծանուցման հաջորդող օրվանից, որով Պայմանավորվող Կողմերը միմյանց կտեղեկացնեն դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

2018թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ՝ իտալական կողմից չի ստացել ծանուցում՝ Արձանագրության ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերի կատարման մասին:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 18.10.2018 10:30:09 GMT+4

Signed by: RUBINYAN RUBEN 1803900202

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԻՆՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 1999 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ» ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՄ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր հայ-իտալական հարաբերությունները զարգացել են բարեկամության և փոխըմբռնման ոգով: Ակտիվ է քաղաքական երկխոսությունը, կողմերը սերտորեն համագործակցում են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Կարևորում ենք ԵՄ շրջանակներում Հայաստանի և Իտալիայի միջև փոխգործակցության խորացումն ու ամրապնդումը: Հայ-իտալական հարաբերությունների զարգացման համար կարևոր խթան հանդիսացավ 2018թ. հուլիսի 30-31-ը Իտալիայի նախագահ Սերջիո Մատարելլաի պետական այցը Հայաստան, որի շրջանակներում ստորագրվել է նշյալ Արձանագրությունը:

Նշյալ փոփոխող Արձանագրությունը հնարավորություն կտա զարգացնելու երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները, կնպաստի Հայաստանի Հանրապետության և Իտալիայի տարածքներում կամ տարածքներով տարանցմամբ իրականացվող ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների դյուրացմանը, դրանց արդյունավետության բարձրացմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը 2018թ. հուլիսի 31-ին ստորագրված ««Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իտալիայի Հանրապետության Կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրության հաստատումը կամ վավերացումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 18.10.2018 10:29:12 GMT+4

Signed by: RUBINYAN RUBEN 1803900202

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՌՈՒԲԵՆ ՌՈՒԲԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010 Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 հեռ. 594-004
Էլ. փոստ info@moj.am

_____N _____

Ձեր N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՆ ՀԱԿՈԲ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արշակյան

Ի պատասխան Ձեր 2018թ. նոյեմբերի 7-ի թիվ 01/17.1/17986-18 գրության՝ Ձեզ ենք ներկայացնում «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ ««Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալիայի Հանրապետության կառավարության միջև ուղևորների և բեռների միջազգային ավտոտրանսպորտային փոխադրումների մասին» 1999 թվականի օգոստոսի 7-ին ստորագրված Համաձայնագիրը» փոփոխող արձանագրությունում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմերի, ինչպես նաև վերոնշյալ արձանագրությունը վավերացման ենթակա դարձնող հիմքերի առկայության մասին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էլ. ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ**

Recoverable Signature

X

Artak Zeynalyan

Signed by: ZEYNALYAN ARTAK 1909690309

Կատարող՝ Արտաշես Հարությունյան
ՀՀ ԱՆ միջազգային իրավական համագործակցության վարչություն
Հեռ. (010) 594-177

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԲԵՌՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 1999 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ» ՓՈՓՈԽՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻՆ ՀԱԿԱՍՈՂ, ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՆՈՐՄԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԴԱՐՁՆՈՂ ՀԻՄՔԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արձանագրությունը չի պարունակում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր:

Միաժամանակ գտնում ենք, որ Արձանագրությունում վավերացման ենթակա դարձնող հիմքեր առկա չեն:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝ Կ. ԽՏՐՅԱՆ